

**«20 ՂԱՍԱԿԱՐԳԻ» ԶՈՐԱԿՈՉԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1941-1942թթ.)***

Ռուբեն Մելքոնյան

*Քանադական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԵՊՀ*

Օսմանյան կայսրությունում քրիստոնյա բնակչության հանդեպ 19-րդ դարի վերջին քառորդից սկսած և մինչև 1920-ական թվականների սկիզբը շարունակված ցեղասպանությունների, կոտորածների հետևանքով մեծապես փոխվեց այդ երկրի էթնիկ-կրոնական պատկերը: Քեմալական շարժման արդյունքում 1923թ. ձևավորված Թուրքիայի Հանրապետությունը ևս որդեգրեց և շարունակեց իր ոչ մուսուլման քաղաքացիների հանդեպ անհանդուրժողական և խտրական քաղաքականություն: Հանրապետական Թուրքիայի պատմության տարբեր ժամանակահատվածներում արձանագրվել են պետականորեն և տարատեսակ «օրենքներով» սահմանված կրոնական, էթնիկ պատկանելության հիման վրա հալածանքներ, խտրականություններ, որոնք հանգեցրել են ազգային փոքրամասնությունների համար մի շարք բացասական հետևանքների՝ արտագաղթ, տնտեսական կյանքից բռնի հեռացում, հոգեկան, բարոյական խեղումներ և, ի վերջո՝ ֆիզիկական ոչնչացում:

Թուրքական պատմագրությունը նման թեմաների կամ չի անդրադարձել, կամ հետևելով ձևավորված ավանդույթներին՝ խեղաթյուրել է իրականությունը: Թուրքիայի պետական տարբեր կառույցների՝ Ազգային մեծ ժողովի, որոշակի նախարարությունների արխիվները մինչ օրս անհասանելի են ուսումնասիրողների համար: Սակայն վերջին շրջանում թուրքական իրականության մեջ տեղի ունեցող որոշ զարգացումների համատեքստում փոքր թվով պատմաբան-ուսումնասիրողներ, որոնք չեն պատկանում «պաշտոնական պատմաբանների» թվին, սկսել են հետաքրքրվել հանրապետական Թուրքիայում ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառված հալածանքի քաղաքականությամբ: Սրան զուգահեռ հրատարակվում են այդ հալածանքների ականատես-վերապրողների հուշերը, որոնք ևս կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն:

20-րդ դարում Թուրքիայի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառված հալածանքի քաղաքականության դրսևորումներից առավել քիչ է ուսումնասիրված 1941թ. ոչ մուսուլման քաղաքացիների շրջանում անցկացված, այսպես կոչված, 20 դասա-

*Պողվածը ընդունվել է 22.12.12:

Պողվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ թուրքագիտության ամբիոնը:

կարգի զինակոչը: Ի՞նչ էր սա ենթադրում: Երկրորդ Չամաշխարհային պատերազմի թեժ ժամանակաշրջանում թուրքական իշխանությունները երկրի ոչ մուսուլման քաղաքացիների՝ հայերի, հույների, հրեաների շրջանում հապճեպ հայտարարել են զորակոչ՝ ըստ 20 դասակարգման: Այս դասակարգումների մեջ էական տեղ էր զբաղեցնում զորակոչիկների տարիքը, այսինքն՝ ըստ առաջին դասակարգման զորակոչվում էին 18 տարեկանները, ըստ երկրորդ դասակարգման զորակոչվում էին 20 տարեկանները և այսպես դասակարգումների թիվը հասել էր 20-ի, ինչի պատճառով էլ գիտական գրականության մեջ այդ զորակոչը ստացավ «20 դասակարգի զորակոչ» անվանումը:

Աղբյուրները փաստում են, որ զորակոչի են ենթարկվել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ չափահաս տղամարդկանց մեծամասնությունը: Ըստ որոշ տվյալների, զորակոչվել են 18-48¹, 26-45², 18-60³ տարիքային խմբերին պատկանող տղամարդիկ: Ավելին՝ զորակոչվել են նաև զինծառայություն անցած տղամարդիկ և պահեստազորայինները⁴: Ջորակոչվածների մեջ նույնիսկ եղել են ծառայությունից նոր վերադարձածներ⁵: Կարևոր է նկատել նաև, որ զինծառայության են կանչվել առանց խտրականության բոլոր տղամարդիկ, անգամ՝ հիվանդներն ու հաշմանդամները⁶: 20 դասակարգի զորակոչի ենթարկված և ծանր պայմաններում իր ծառայությունը անցկացրած հայազգի Սարգիս Չերքեզյանը վերոնշյալի մասին հետաքրքիր տվյալներ է փոխանցում: Նա պատմում է իրենց ճամբարում «ծառայող» հայազգի մի հոգեկան հիվանդի մասին. «Յեղիքուլեի հայկական հիվանդանոցում հոգեկան հիվանդներ կային, թեթև խանգարում ունեցողներ... Սրանցից մեկին ուղարկել էին նպարավաճառի մոտ, ճանապարհին ոստիկանությունը ձերբակալել էր, վերցրել, բերել էին ծառայության: Մարդն իրականում գիժ էր... Մի օր ասաց. «Այ մարդ, հոգեբուժարանում այստեղից ավելի լավ էր»: Մարդն իրավացի էր: Նրան բերել էին միայն հայ լինելու համար»⁷: Նմանատիպ փաստեր է ներկայացնում նաև հայազգի գրող-լրագրող Երվանդ Գոբեյանը, ով նույնպես այդ տարիներին եղել է պարտադիր զինծառայության մեջ: Ըստ նրա, 20 դասակարգի զորակոչի ժամանակ բացարձակ ուշադրություն չի

¹ Միմնյան Յր., *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 504:*

² Koçoğlu Y., *Hatırlıyorum Türkiye'de gayrimüslim hayatları, İstanbul, 2003, s. 40.*

³ Аванесов С., *Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963, стр. 162.*

⁴ Bali R., "Yirmi Kura İhtiyatlar" olayı, *Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 4.*

⁵ Koçoğlu Y., *Աշված աշխ., էջ 40:*

⁶ Bali R., *Աշված հող., էջ 4:*

⁷ Çerkezyan S., *Dünya Hepimize Yeter, İstanbul, 2003, s. 121.*

դարձվել մարդկանց առողջական վիճակին. օրինակ հույն Թեոհարին կույր է եղել, Արսլան Յորգոն մտավոր հետամնաց և այլն¹:

Կարևոր է շեշտել, որ ոչ մուսուլմանների զորակոչի որոշումը ընդունվել է հույժ գաղտնիության պայմաններում և մինչև վերջերս հստակ չէր անգամ ամսաթիվը, սակայն ուսումնասիրող Սայիթ Չեթինօղլուի 2009թ. տպագրված ուշագրավ և արժեքավոր աշխատության մեջ հեղինակը ներկայացնում է գաղտնի որոշման հետ կապված մանրամասներ և լույս սփռում հարցի այդ կողմի վրա: Այսպես, Թուրքիայի կառավարությունը 1941թ. ապրիլի 22-ի նիստում որոշում է ընդունում բանակ զորակոչել ազգային փոքրամասնությունների համայնքների չափահաս տղամարդկանց՝ ընդհանուր առմամբ շուրջ 12 000 մարդու²: Նույն օրը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստում քննարկվել և ընդունվել է պաշտպանության նախարարության առաջարկը 1896-1913թթ. ծնված ոչ մուսուլման տղամարդկանց զորակոչել, սակայն հանձնել հասարակական աշխատանքների նախարարության ենթակայությանը³: Հետաքրքիր է փաստել, որ Թուրքիայի կառավարությունը զորակոչի անցկացման անհրաժեշտությունը «հիմնավորել» է այն անհեթեթ փաստարկով, թե իբր ֆաշիստական Գերմանիան նպատակ ունի հարձակվել Թուրքիայի վրա⁴:

20 դասակարգի զորակոչի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ օրենքի համաձայն այն կիրառվում էր բացառապես ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ⁵: Թուրքական որոշ աղբյուրներ փաստում են, որ հատուկ ջանքեր է գործադրվել, որպեսզի այդ որոշման մասին տեղեկացվեն միայն համապատասխան ատյանները⁶ և տեղեկության արտահոսք չլինի: Ջորակոչի մասին նախօրոք չի հայտարարվել և այն կատարվել է հապճեպ, ընդամենը մի քանի ժամվա ընթացքում: Ոստիկանները փողոցներում, աշխատավայրերում, տներում ստուգել են անձնագրերը և, երբ հաստատվել է, որ տվյալ անձը պատկանում է ազգային փոքրամասնությունների համայնքներից որևէ մեկին, անմիջապես տարել են, անգամ թույլ չտալով տեղյակ պահել իրենց հարազատներին⁷: Այն տղամարդկանց նկատմամբ, ուն ոստիկանները չեն կարողացել հայտնաբերել, հայտարարվել է հետախուզում:

¹ Bali R., *Աշված հող.*, էջ 9:

² Çetinoğlu S., *Ekonomik ve Kültürel Jenosit: Varlık Vergisi 1942-1944, İstanbul, 2009, s. 57.*

³ Նույն տեղում:

⁴ Bali R., *Devletin Yahudileri ve “Öteki” Yahudi, İstanbul, 2004, s. 301.*

⁵ Bali R., *“Yirmi Kura İhtiyatlar” olayı, Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 4.*

⁶ Նույն տեղում, էջ 9:

⁷ Նույն տեղում:

Վերևում նշվեց, որ զորակոչվածները պատկանում էին տարբեր տարի-քային խմբերի և ականատեսներ-վերապրողները վկայում են, որ ոստիկանները շատ ուշադրություն չեն դարձրել մարդու տարիքին, քանի որ նրանց հրամայված է եղել հավաքատեղի բերել ոչ մուսուլման ցանկացած տղամարդու: Օրինակ՝ գործարար Վիտալի Յաքքոն, որը երրորդ անգամ է ծառայության գնացել, իր հուշերում պատմում է. «Մեզ «բարձել» էին ապրանքային վազոններում: Մեր բոլոր կարիքները այս վազոնում էինք հոգում: Մեր մեջ ճերմակ մազերով վաթսուև տարեկան հույներ, հայեր, հրեաներ կային: Սրանք զորակոչվել էին լոկ ոչ մուսուլման լինելու պատճառով: Այս մարդիկ ողբում էին իրենց ծակատագիրը»¹:

Ջորակոչի հապճեպ անցկացմանը զուգահեռ կար մեկ այլ հանգամանք ևս, որն անհանգստացնում էր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին. դա այն էր, որ ծառայությունից ազատելու համար առաջարկված կաշառքն անգամ կտրականապես մերժվել էր թուրքական համապատասխան կառույցների կողմից²:

Հարկ է շեշտել, որ զորակոչված ոչ մուսուլմանները ենթարկվում էին ոչ թե Թուրքիայի պաշտպանության նախարարությանը, այլ հասարակական աշխատանքների նախարարությանը և աշխատում էին տարատեսակ շինարարություններում: Ջորակոչվածներն, ըստ էության, զինվոր չէին, այլ ինչպես ցույց տվեցին զարգացումները, պետության կողմից պատանդ վերցված անվստահելի քաղաքացիներ: Նրանք չեն անցել զինվորական պատրաստվածության դասընթաց-պարապմունքներ, նրանց չի տրվել զենք և անգամ զինվորական համազգեստ. ոչ մուսուլման «զինվորները» կրել են 1939թ. դեկտեմբերի 28-ին Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժից հետո որպես օգնություն Հունաստանի ուղարկած աղքատավաքի սրճագույն հագուստները³: Երվանդ Գոբեյանի տվյալների համաձայն, զինվորական երկարաճիտ կոշիկների փոխարեն նրանց տվել էին տրեխներ⁴, իսկ Սարգիս Չերքեզյանը նշում է, որ իրենք ստիպված կրել են «թաքունյա» կոչված փայտե սանդալներ⁵: Նկատենք նաև, որ այդ յուրա-հատուկ համազգեստների շնորհիվ հասարակությունը ևս տարբերակել է զորակոչված ոչ մուսուլմաններին և նրանց կոչել «գյավուր (անհավատ) զինվորներ»⁶:

¹ Bali R., “Yirmi Kura İhtiyatlar” olayı, Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 10:

² Նույն տեղում, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 5, տե՛ս նաև՝ Koçoğlu Y., *Նշված աշխ.*, էջ 40:

⁴ Bali R., “Yirmi Kura İhtiyatlar” olayı, Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 5.

⁵ Çerkezyan S., *Նշված աշխ.*, էջ 114:

⁶ Նույն տեղում, էջ 113:

Ուշարժան է հատկապես այն հանգամանքը, որ երեք ոչ մուսուլման փոքրամասնություններին թուրքական պետությունը նույն վերաբերմունքը ցույց չի տվել և դա վկայված է տարբեր աղբյուրներում: Այսպես, նշվում է, որ եթե հույները և հրեաները իրենց «ծառայությունը» անցկացնում էին բանակի ծառայողական գումարտակներում, օդանավակայանների շինարարություններում որպես բանվոր, ապա հայերը ընդգրկված էին գերազանցապես հասարակական աշխատանքների գումարտակում¹: Ուսումնասիրող Ռեֆաթ Բալին հայերի նկատմամբ այս ընդգծված անվստահությունը պայմանավորում է. «20-րդ դարի սկզբին տեղի ունեցած դեպքերով»²: Սարգիս Չերքեզյանը հետազայում իր հուշերում «զինծառայության» մասին գրում է. «Անունը «զինծառայություն» էր, սակայն ծառայության հետ բացարձակ կապ չուներ, մեզ հավաքում էին աշխատանքային ճամբարներում և աշխատեցնում: Ոչ մուսուլմաններին զենք, նորմալ զինվորական համազգեստ չէին տալիս: Առավոտից երեկո աշխատեցնում էին, անտեսվում էր և՛ ծմռան ցուրտն ու ծյունը, և՛ ամռան տապն ու արևը»³:

Ձորակոչված ոչ մուսուլմաններին հիմնականում ուղարկել են Թուրքիայի արևելյան շրջանները. «զինվորներին» ցրում էին Աֆյոնքարահիսարում, Սեբաստիայում և Յոզղաթում տեղակայված հավաքատեղիներից⁴: Բանվորական ճամբարներում, ուր տարել են «զինվորներին», պայմանները եղել են ծայրահեղ վատ, ինչի հետևանքով տարածվել են հիվանդություններ՝ պատճառ դառնալով հաշմանդամության և մահվան: Սարգիս Չերքեզյանը փոխանցում է, որ 12-13 հոգով ապրել են մի վրանում, որտեղ չեն եղել անկողնային պարագաներ և քնել են հողե հատակին⁵: Իսկ հրեա «զինվոր» Յաշար Փաքերը այսպես է նկարագրում ճամբարային պայմանները. «Ես Դենիզլիի Չիվրիլ գավառակում էի: Նախ և առաջ բոլոր ոչ մուսուլմաններին ուղարկել էին Աֆյոն, այնտեղ մի հանձնաժողով մեզ ցրեց: Երբ հասանք Չիվրիլ մեզնից սարսափելի հոտ էր գալիս: Այնտեղ խմում էինք մի ցեխոտ ջրափոսի ջուրը: Դրանով նաև ճաշ էինք պատրաստում: Եվ սկսվեց տիֆի համաճարակ: Հինգ հարյուր հոգի էինք, որոնցից միայն քսան հոգին չէին վարակվել, այդ թվում և ես: Վրանում տասնչորս հոգի էինք, որոնցից տասներկուսը հիվանդ էին»⁶: Չնայած պաշտոնական թվեր չկան այդ «զինծառայության» ընթացքում

¹ Bali R., *Նշված հոդ.*, էջ 6, տե՛ս նաև՝ Koçoğlu Y., *Նշված աշխ.*, էջ 40:

² Bali R., "Yirmi Kura İhtiyatlar" olayı, *Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 6.*

³ Çerkezyan S., *Նշված աշխ.*, էջ 113-114:

⁴ Նույն տեղում, էջ 113:

⁵ Նույն տեղում, էջ 114:

⁶ Bali R., *Նշված հոդ.*, էջ 9:

արձանագրված մահվան դեպքերի մասին, սակայն ականատես-վերապրողների և որոշ աղբյուրների համաձայն դրանք բավական շատ են եղել¹: Սարգիս Չերքեզյանը պատմում է. «Այդ ընթացքում շատ մարդ մահացավ. ո՞ր մեկն ասեմ, Եփրատում խեղդվածներին ասե՞մ, հիվանդություններից, թրքախտից մահացածներին ասե՞մ...»²: Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանն անդրադառնալով այդ թեմային՝ փաստում է. «Պայմաններն այնքան ծանր էին, որ նրանցից շատերը մեռան հոգնածությունից ու հյուժախտից, կամ խեղանդամ եղան»³:

Ավելորդ է անդրադառնալ նաև ճնշիչ հալածանքի մթնոլորտին, որը տիրել է ճամբարներում, որտեղ իրենց տառապանքն են կրել տարբեր խավերի և կրթվածության աստիճանի «զինվորները»: Այս առումով խիստ բնութագրական է Սարգիս Չերքեզյանի փոխանցած հետևյալ փաստը. «Շատ հաճախ առանց որևէ նպատակի փորել էին տալիս մի տեղ և դուրս եկած հողը, խիճը մեկ ուրիշ փոսի մեջ լցնել տալիս: Թուրքերը մեր գլխին որպես վերակացու ավելի շատ մալաթիացի քրդերին էին կարգում: Այդ քսան դասակարգի հավաքվածների մեջ կային քիմիկոսներ, դեղագործներ, մտավորական, կրթված մարդիկ... Սակայն նրանց չէին աշխատեցնում ըստ իրենց կրթական կամ մասնագիտական հնարավորությունների: Օրինակ՝ Արմենակ Քալայջըրյան անունով մի բարձրակարգ ինժեներ կար: Քալայջըրյանը իմ Ազնիվ մորաքրոջ ծանոթն էր: Առաջին անգամ երբ եկանք Ստամբուլ՝ 1928-ին և մնում էինք մորաքրոջս մոտ, Արմենակ Քալայջըրյանը գալիս գնում էր նրանց տուն: Այն ժամանակ Ռոբերտ քոլեջի ուսանող էր: Ծառայության ժամանակ այս մարդու հետ նույն գորամաստում էինք: Բարձրակարգ ինժեներ Արմենակ Քալայջըրյանին էլ մեզ հետ միասին աշխատեցնում էին հող փորելու գործում. ձեռքին տվել էին սայլակ, հողը լցնում էինք, վերցնում տանում էր մի քիչ այն կողմ թափում էր ու ետ գալիս... Մալաթիացի քուրդ հսկիչները Քալայջըրյանի ամեն գնալ գալուց հայիոյելով մահակներով հարվածում էին մեջքին: Սա արդեն սովորական երևույթ էր, որ կրնվում էր ամեն օր մինչև երեկո»⁴:

Ջորակոչի ընթացքում արձանագրված խիստ ուշագրավ մի երևույթի մասին արժեքավոր տեղեկությունների ենք հանդիպում նույն Սարգիս Չերքեզյանի հուշերում: Ըստ նրա, ոչ մուսուլման փոքրամասնությունների հետ միասին «զինծառայության» են տարել նաև բռնի կրոնափոխ հա-

¹ Koçoğlu Y., *Աշված աշխ.*, էջ 40:

² Çerkezyan S., *Աշված աշխ.*, էջ 120:

³ Սիմոնյան Հր., *Աշված աշխ.*, էջ 504:

⁴ Çerkezyan S., *Աշված աշխ.*, էջ 115:

յերին¹: Չերքեզյանը նշում է. «Այդ տարիներին ինչքան կրոնափոխ կար, նրանց էլ իսմեթ փաշան² բերեց մեզ հետ: Մեր վրաններ բերել էին մեծ մասամբ Մալաթիայի շրջակայքի կրոնափոխ հայերին: Խեղճերը Կարապետ օղլու Ահմեթ, Գրիգոր օղլու Չասան և նմանատիպ անուններ ունեին: Քանի որ մուսուլման էին դարձել, ուստի ոչ մի կերպ չէին կարողանում հասկանալ, թե ինչու էին իրենց այստեղ բերել: Այդ մարդիկ շարունակ ասում էին. «Այ մարդ համ մուսուլման ենք, համ էլ մեզ բերեցին այս գյավուրների մեջ»: Մեզ մոտ ուզում էին ծնացնել, թե մուսուլման են: Իսկ ոչ մուսուլման գորակոչվածները, որոնք մեծ մասամբ Ստամբուլից էին, այլևս չդիմանալով կրոնափոխ հայերի մուսուլման երևալու համար արած դերասանություններին՝ նրանց նախատում էին. «Եթե մուսուլման էիր, ապա ի՞նչ գործ ունես այստեղ»: Ի վերջո, այդ մարդիկ ընդունեցին, որ հայ են»³: Այս հետաքրքիր փաստը ևս մեկ անգամ ապացուցում է, որ 20 դասակարգի զորակոչը ունեցել է հստակ էթնիկ երանգ և նույնիսկ բռնի իսլամացված հայերը թուրքական իշխանությունների համար եղել են վտանգի աղբյուր ու անվստահելի տարր: Սա նաև ցույց է տալիս, որ պետական կառույցները հայերի իսլամացման գործընթացի հենց սկզբից նրանց պահում են ուշադրության կենտրոնում և, ի վերջո, նրանց իրակացում չեն համարում մուսուլման:

Խոսելով 20 դասակարգի զինակոչի պատճառների և նպատակների մասին՝ պետք է նշել, որ աղբյուրներում եղած որոշակի փաստերը, ինչպես նաև ականատես-վերապրողների պատմածները գալիս են հաստատելու այն վարկածը, որ, խոշոր առումով, այն էթնիկ զտում էր՝ դրան ածանցյալ այլ խնդիրներով:

Նախ պատճառների մասին. որոշ հեղինակների մոտ կարելի է հանդիպել այն միտքը, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ կախված ռազմական գործողությունների ընթացքից, Թուրքիան պետք է պատերազմ սկսեր Խորհրդային Միության դեմ՝ այդ հարցում հետապնդելով հստակ պանթուրքիստական նպատակներ: Դր. Սիմոնյանը Թուրքիայում տեղի ունեցած նախապատրաստական աշխատանքների մասին նշում է. «Երկրի խորքերից սկսվեց զորքերի տեղաշարժ դեպի Անդրկովկասի սահմանները, կատարվեց պահեստայինների զորահավաք, նոր զորամասերի ձևավորում, բանակի թվաքանակը հասցվեց պա-

¹ Խոսքը հիմնականում Հայոց ցեղասպանության ժամանակ ստիպված իսլամ ընդունած հայերի մասին է:

² Նկատի ունի Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինենյուլին (1938-1950թթ.):

³ Çerkezyan S., նշված աշխ., էջ 123:

տերազմական պայմանների»¹: Խորհրդային Միության դեմ ֆաշիստական զորքերի հարձակման լուրը մեծ ոգևորություն է առաջացրել թուրքական քաղաքական վերնախավում: Հետագայում այդ մասին իր հուշերում անդրադարձել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի այն ժամանակվա պատգամավոր Ֆայիք Ահմեթ Բարուքչուն՝ նշելով. «Բոլորը շնորհավորում էին միմյանց: Պատգամավորները ասում էին իրար. «Ձեր տոնը թող շնորհավոր լինի»»²:

Անդրադառնալով նպատակներին՝ հարկ է նկատել, որ առավելապես տարածված է եղել այն տեսակետը, համաձայն որի թուրքական իշխանությունները՝ պատրաստվելով հնարավոր պատերազմի, նախօրոք հավաքել և չեզոքացրել են «5-րդ շարասյուն» համարվող ազգային փոքրամասնություններին: Ավելին՝ ականատես-վերապրողների վկայությունները, ինչպես նաև որոշակի փաստեր, թույլ են տալիս ասել, որ թուրքական իշխանությունները նպատակ են ունեցել անհրաժեշտության պարագայում ֆիզիկապես ոչնչացնելու ոչ մուսուլման «զինվորներին»: Ականատեսները փոխանցում են, որ «զինծառայության» ժամանակ թուրք սպաները և վերակացուները հաճախ են բացահայտ կամ թաքուն ակնարկել նրանց կոտորելու մասին, հայտարարելով՝ «Ստամբուլը մոռացեք»³, «Այս փոսերը ձեր գերեզմաններն են դառնալու»⁴: Ստամբուլի կայարանում նրանց «ճանապարհելիս» պետական պաշտոնյաներն ասել են. «Հերիք է ինչքան ապրեցիք»⁵: Սարգիս Չերքեզյանն այս ամենում կարևոր է համարում նաև Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինենյուլի բացահայտ հակահայկական դիրքորոշումը և նշում. «Նա (Իսմեթ Ինենյուն Ռ.Մ.) շարունակում էր այն քայլերը, որոնք ժամանակին արել էր երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, պակասում էր միայն կոտորածը, այն էլ չհամարձակվեց անել, քանի որ հարմար առիթ չեղավ»⁶: Ինչպես շատերը, այնպես էլ Չերքեզյանը այս հարցում վճռորոշ է համարում Ստալինգրադի ճակատամարտի ելքը. եթե գերմանական բանակը հաղթեր ճակատամարտում, ապա թուրքական իշխանությունները կիրականացնեին ոչ մուսուլման բնակչության կոտորած:

Բացի այդ դեպքերի ականատես-վերապրողների վկայություններից, կա թուրքական իշխանությունների իրական նպատակը բացահայտող

¹ Միմոնյան Հր., *Աշված աշխ.*, էջ 502:

² Barutcu F. A., *Siyasi Hatıralar*, İstanbul, 2001, c. 1, s. 494, նույնը տե՛ս նաև, Hür A., *Yirmi Kur'a İhtiyatlar Olayı*, Ağos, 30,05,2008.

³ Koçoğlu Y., *Աշված աշխ.*, էջ 40:

⁴ Bali R., *Աշված հող.*, էջ 15:

⁵ Çerkezyan S., *Աշված աշխ.*, էջ 126:

⁶ Նույն տեղում, էջ 125:

շատ կարևոր մեկ այլ հայտարարություն ևս, որն արվել 1955թ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովում այն ժամանակվա վարչապետ Ադնան Մենդերեսի կողմից: 1955թ. սեպտեմբերի 6-7-ին թուրքական իշխանությունները կազմակերպել են Ստամբուլի, Իզմիրի հույն և հայ բնակչության կոտորած ու թալան: Դեպքերից հետո թուրքական խորհրդարանում իշխող Դեմոկրատական և արդեն ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցությունների միջև սկսվում է փոխադարձ մեղադրանքների շղթա ու ի պատասխան ԺՀԿ նախագահ Իսմեթ Ինենյուլի քննադատական ելույթների՝ վարչապետ Ադնան Մենդերեսը խորհրդարանի ամբիոնից հայտարարում է. *«Առաջին հերթին, դեմոկրատների համար շատ հեշտ է հիշեցնել Ստամբուլի դժբախտ ոչ մուսուլման տարրերին այն մասին, թե ո՞վ է պարոն Իսմեթ Ինենյուն, ի՞նչ է ներկայացնում իրենից ԺՀԿ-ի ղեկավարությունը, հիշելով դրա համար «Ունեցվածքի հարկի» սարսափելի էջերը, քրիստոնյաների հավաքը՝ զինակոչի անվան տակ պատերազմի տարիներին նրանց սպանդանոց ուղարկելու համար: Եթե այդ օրերին նացիստական Պերմանիան չպարտվեր Ստալինգրադում, ապա անհապաղ գործի մեջ կդրվեր Իսմեթ Ինենյուլի ծրագիրը, որի համաձայն պետք է ոչնչացվեին հայ, հույն, հրեա 18-60 տարեկան տղամարդիկ այնպես, ինչպես ոչնչացվել են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ զինժառայողները բանվորական գումարտակներում իրենց ձեռքերով փորելով իրենց գերեզմանները (ընդգծումը մերն է Ռ.Ս.): Թուրքիայի և հատկապես Ստամբուլի բնակչությանը լավ հայտնի է Իսմեթ Ինենյուլի և իր ժողովրդական կուսակցության կատաղի ատելությունը քրիստոնյաների և ոչ թուրքերի նկատմամբ»¹:*

Ավելորդ չէ հավելել նաև, որ ազգային փոքրամասնությունների շրջանում տարածված է եղել այն միտքը, որ ոչ մուսուլման «զինվորներին» ոչնչացնելու որոշմանը, իբրև թե, դեմ է եղել Թուրքիայի գլխավոր շտաբի այն ժամանակվա պետ մարշալ Ֆեզի Չաքմաքը² և այդ պատճառով նրա հանդեպ շատ ոչ մուսուլմաններ երախտագիտորեն են տրամադրված³:

Ոչ մուսուլման տղամարդկանց ֆիզիկական ոչնչացումից բացի, ենթադրվում է, որ թուրքական իշխանություններն ունեցել նաև տնտեսական կյանքից նրանց մեկուսացնելու և հեռացնելու նպատակ: Վերլուծաբան Ռըդվան Աքարը մեջբերում է այս վարկածը հաստատող տարբեր աղբյուրներ և հավելում, որ ոչ մուսուլմանների լուրջ դիրքերը առևտրի ոլորտում մտահոգում էր թուրքական իշխանություններին: Տնտեսական կյանքից

¹ Аванесов С., *Նշված աշխ.*, էջ 161-162:

² Koçoğlu Y., *Նշված աշխ.*, էջ 40:

³ Bali R., *Նշված հոդ.*, էջ 15:

ազգային փոքրամասնություններին այս կերպ հեռացնելու միտքը բավական իրատեսական է թվում նաև այն առումով, որ 20 դասակարգի զորակոչի ավարտից (1942թ. հուլիսի 27¹) կարճ ժամանակ անց՝ 1942թ. նոյեմբերի 11-ին Թուրքիայի Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ունեցվածքի հարկի» մասին օրենքը, որը համարվում է ոչ մուսուլմանների տնտեսական ցեղասպանություն²:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ հանրապետական Թուրքիայում 20-րդ դարի կեսերին ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ դրսևորվել է ծայրահեղ խտրական վերաբերմունք և անգամ զորակոչն ունեցել է էթնիկ բնույթ: Թուրքական պետական մեքենան իր բոլոր կառույցներով լծված է եղել միատարր, այն է՝ թուրքական պետություն ստեղծելու գաղափարի իրականացման գործին, որի ճանապարհին ազգային փոքրամասնությունների դեռևս պահպանված բեկորները դարձել են առաջնային թիրախներ: Փաստերը ցույց են տալիս, որ հանրապետական Թուրքիայում մինչև 20-րդ դարի կեսերը մեծապես շարունակվել է երիտթուրքական գործելակերպը. սրա պատճառներից առաջինը պետական շարունակական քաղաքականության բնույթն ու էությունն էր, սակայն չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակվա թուրքական քաղաքական վերնախավի մեծագույն մասը երիտթուրքական կուսակցության նախկին անդամներ ու ակտիվ գործիչներ էին: Եթե այսօր Օսմանյան կայսրության հատկապես 19-20-րդ դարերի քաղաքականության ուսումնասիրությունը թույլ է տալիս վստահաբար կիրառել «ցեղասպան պետություն» հիմնավորված եզրը³, ապա ազգային փոքրամասնությունների նկատմամբ Թուրքիայի Հանրապետության 20-րդ դարի հատկապես 30-60-ական թվականների քաղաքականության ուսումնասիրությունը հիմք է տալիս կիրառել «այլամերժ պետություն» եզրը: 20 դասակարգի զորակոչը, ինչպես նաև նմանատիպ այլ փաստեր ապացուցում են թուրքական այլամերժ քաղաքականության շարունակական բնույթը:

¹ Bali R., *Նշված հոդ.*, էջ 16:

² Այդ մասին մանրամասն տե՛ս, Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2008, հ. 5, էջ 127-143:

³ Այդ մասին տե՛ս, Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009, էջ 32-33:

Призыв «двадцати классов» в Турецкой Республике (1941-1942 гг.)

Рубен Мелконян

Резюме

Сформированная в результате Кемалистского движения Турецкая Республика также переняла и продолжила политику нетерпимости и дискриминации по отношению к своим гражданам немусульманам. Из проявлений дискриминационной политики Республиканской Турции в отношении национальных меньшинств в XX в. наименее изученным является так называемый призыв «двадцати классов», проведенный в отношении немусульманских граждан в 1941 г.. В разгар Второй мировой войны турецкие власти наспех призвали в армию большинство совершеннолетних мужчин, представителей нацменьшинств. На самом деле этот призыв был целенаправленной этнической чисткой со всеми производными от нее проблемами. Турецкая государственная машина и все ее структуры были вовлечены в дело притворения в жизнь идеи создания однородного, то есть турецкого государства, и еще сохранившиеся осколки национальных меньшинств стали первичными мишенями на этом пути.

“20 classes” draft in the Republic of Turkey (1941-1942)

Ruben Melkonyan

Summary

The Republic of Turkey, established as a result of Kemalist movement, adopted and continued the policy of intolerance and discrimination towards its non-Muslim citizens. The least investigated problem among the manifestations of Turkish persecution policy against national minorities in the XX century is the so-called “20 classes” draft, conducted in 1941 against non-Muslim Turkish citizens. At the height of the World War II Turkish authorities conscripted the majority of adult male representatives of national minorities. This draft was a real ethnic purge with all problems derivative to it. Turkish state apparatus with all its structures was involved in the process of realization of the homogeneous that is Turkish state creation idea and still preserved debris of non-Muslim minorities became the primary targets on its way.